ԱՐԵՒՄՈՒՏՔ

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

GIARDINI:

Երբ ճերմակ նաւերը բախւում են կղզիին՝ պարտէզը դեղին հեծկլտոց է հանում․ տերեւները դանդաղօրէն վայր են ընկնում եւ մերկացած ճիւղերը մետաղի նման փայլում են:

Գեղեցիկ այդ մահի հետ ամբողջ Վենետիկը սարսռում է:

Գարիբալդիի արձանը՝ պղնձէ մի ժայռի վրայ կանգնած՝ ծառերի կատարին երերող յիշատակներ է փնտռում:

Լագունայի մակերեսին՝ երփներանգ լոյսերի սիմֆոնիա:

Զրէ այդ դաշտում կղզիներ են ման գալիս: Սան Սերւօլօն՝ խենթերի կղզին՝ փակ իր պատուհանների ետեւ տենդ եւ անհանգստութիւն է կուտակում: Յետոյ ոլորւում են հեղուկ ճամբաները՝ պսպղուն եւ մինակեաց, բազմաթիւ սիւներով եզերուած: Ու ահա Սուրբ Ղազարը կամաց կամաց սուզւում է ճառագայթների մէջ: Բիւզանդական իր զանգակատան շուրջը ճերմակ թռչուններ են պտտում եւ կարմիր իր շէնքերից մութ շուքեր են վայր ընկնում:

Հայ աղջկայ մոխրագոյն մեծ աչքերում հեքեաթ է սառել: Երբ փորձում է խօսել՝ ձայնը քիչ դողում է: Ձեռքի փոքրիկ պայուսակը սեղմում է կրծքին․ վիզը ծռում է հետաքրքրուած թռչունի նման․ մերթ ընդ մերթ կանգ է առնում․ կարծես ականջ է դնում վայր ընկնող **տերեւներին:**

Վենետիկը եւ իր աշունը մտել են երակներիս մէջ հին գինիի նման:

— Դեռ պատանի, ահա այստեղ, Վագների այս կիսանդրիի մօտ գալիս ժամերով նստում էի: Այս պարտէզի ամէն մի ծառը ինձ ծանօթ է․— մինչեւ իսկ ձմեռը, երբ Լիդօյից մոխրագոյն մշուշ է սողում, ես գալիս երազում էի այստեղ:

Խօսում է: Երաժշտական իր ձայնի մանկական շեշտը քաղցր է եւ մտերիմ:

Մտերի՛մ:

Կանանց աչքերում մենք մեր մօր նայուածքն ենք փնտռում: Ա՛յն նայուածքը, որին մենք հանդիպել ենք օրօրոցում եւ որ կորցրել ենք կեանքի դաժան օրերում:

— Ասեմ... Հռոմում ման էի գալիս հարբածի նման: Աղջի՛ ի՞նչ ունես,— ասում էր մայրս: — Իսկ ես չէի իմանում ինչ ունեմ: Մի օր էլ ծածուկ քեզ այդ բացիկը գրեցի․ իմանա՛ս՝ ինչքան վախեցայ, ինչքա՜ն վախեցայ...

Ծառերի մէջ բոց է շրջում:

Այդ կրակը փունջ փունջ վայր է ընկնում ջրերի մէջ, սուզւում է խորը, կարծես այնտեղ յատակում խարոյկ են վառել:

Ձեռքը առել եմ ձեռքիս մէջ, աչքերը աչքերիս մէջ:

— Ահա այս նստարանի վրայ ոչ ոք չկայ․ նստենք:

— Յետոյ Ռավեննայում, հինաւուրց այդ քարերի մօտ, այնպէս էր ինձ թւում, որ մէկը ինձ սպասում է: Ո՞վ է, Տէր Աստուած, ո՞վ է, մտածում էի... Եւ մի օր էլ նամակդ առի... Քանի անգամ եմ կարդացել ... կան բաներ, գիտես, որ դժուար է բացատրել․ զգացումներ են որ կլանում են քեզ․ գալիս են՝ չես իմանում որտեղից, գալիս են մրրիկի նման եւ ամէն ինչ տակնուվրայ են անում...

— Ես սիրում եմ խօսելու այդ ձեւդ եւ սիրում եմ աչքերդ...

— Գիւղում, երբ գրօսանքի չէի գնում, նստում էի դաշնամուրիս առջեւ: Ժամերով... գիւղի ծերուկ քահանայի տան դաշնակը: Ինքը գալիս երբեմն նստում էր անկիւնում, լուռ ու մունջ, շուքի նման: Լա՛ւ է՝ ասում էր՝ ա՜հ ինչ լաւ է, փոքրիկ իմ օրիորդ... Իսկ իմ ուշքս ու միտքս ուրիշ տեղ էին.., Ո՞ւր էին․ գիտէի եւ չգիտէի...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան